Արձանագրություն N 2
«ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԾՁԲ 21/5» ծածկագրով **«Էջմիածին քաղաքի Ա. Մանուկյան 2-րդ թաղամասի կոյուղու (ջրահեռացման) համակարգի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և հեղինակային հսողության ծառայությունների»** ձեռքբերման գնանշման հարցման ընթացակարգի
«Հրավերի պարզաբանման մասին»

ք. Էջմիածին **«23» մարտի 2021 թ.**

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Էջմիածնի համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ա. Պետրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝
Էջմ. համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության «Բարեկարգում և կանաչապատում» տեղամասի պետի տեղակալ՝ Մ. Աբրահամյան

Էջմ. համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության գլխավոր հաշվապահ Լ. Աթանեսյան

Էջմ. համայնքապետարանի Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալ՝ Ռ. Մարտիրոսյան

Էջմիածնի համայնքապետարանի Ֆին. բաժնի 1-ին կարգի մասնագետ՝ Մ. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Էջմիածնի համայնքապետարանի Ֆին. բաժնի պետ՝ Լ. Քալաշյան

1. Հրավերի վերաբերյալ պարզաբանում տալու մասին

1.1 «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԾՁԲ 21/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 23.03.2021 թ. ստացվել է հետևյալ հարցադրումը.

Հարցադրում N 1

1. Ա. Մանուկյան 2-րդ թաղամասի ջրահեռացման համակարգը միանալու է արյո՞ք Էջմիածին քաղաքի ջրահեռացման գործող համակարգին, թե նախատեսվում է այլ տարբերակ: Եթե միանալու է գործող համակարգին, ապա առկա է արյո՞ք շահագործող կազմակերպության հավաստումը, որ կեղտաջրի նոր ելքի ավելացումը չի խախտի գործող համակարգի աշխատանքի հիդրավլիկական ռեժիմը:

2. Բնակելի կառուցապատված թաղամասի ուսումնասիրման, փողոցների գեոդեզիական հանույթների կատարման, նախնական (տեխնիկական) նախագծի մշակման, Պատվիրատուի հետ առաջարկվող սխեմայի համաձայնեցման, նշված բոլոր բաժիններով (ներառյալ ջրահեռացման ցանցի հիդրավլիկական մոդելավորումը, առանց որի հնարավոր չէ իրականացնել կոյուղագծերի նախագծումը) աշխատանքային նախագծի մշակման, քաղաքաշինական փորձաքննության անցկացման, մրցութային փաստաթղթերի պատրաստման և վերջնական փաթեթը Պատվիրատուին հանձնման համար արդյո՞ք նշված ժամանակահատվածը բավական է 2212 գծ.մ ընդհանուր երկարության կոյուղագծերի համակարգի պատշաճ մակարդակով աշխատանքային նախագծի մշակման համար:

1.2 «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԾՁԲ 21/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 23.03.2021 թ. ստացված հարցադրմանը պատասխանել հետևյալ բովանդակությամբ.

Պարզաբանում N 1

Հարգելի մասնակից, ի պատասխան Ձեր հարցմանը, տեղեկացնում ենք, որ

1. Ա. Մանուկյան 2-րդ թաղամասի ջրահեռացման համակարգը միանալու է Էջմիածին քաղաքի ջրահեռացման գործող համակարգին: Պատվիրատուն արդեն իսկ դիմել է համապատասխան շահագործող կազմակերպությանը՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին, անհրաժեշտ տեխնիկական պայմանները ստանալու համար, որը, սակայն դեռ չենք ստացել: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ շահագործող կազմակերպության համապատասխան ճարտարագետների հետ համատեղ քննարկումներից հետո կոյուղագծի միացման տեղը հստակեցվել է, որը ներկայացվում է կից հատակագծում:

2. Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և ներկայացման համար սահմանված 21 օրացուցային օրը բավարար է կոյուղագծերի համակարգի պատշաճ մակարդակով աշխատանքային նախագծի մշակման համար:

Ընդունվում է որոշում՝ 5 կողմ, 0 դեմ:

Հանձնաժողովի նախագահ՝
Էջմիածնի համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ա. Պետրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝
Էջմ. համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության «Բարեկարգում և կանաչապատում» տեղամասի պետի տեղակալ՝ Մ. Աբրահամյան

Էջմ. համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության գլխավոր հաշվապահ Լ. Աթանեսյան

Էջմ. համայնքապետարանի Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալ՝ Ռ. Մարտիրոսյան

Էջմիածնի համայնքապետարանի Ֆին. բաժնի 1-ին կարգի մասնագետ՝ Մ. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Էջմիածնի համայնքապետարանի Ֆին. բաժնի պետ՝ Լ. Քալաշյան

1379
1380
0325
0874
2297
2296
0913
1383
0894
2295
1382
1384
0911
0964
1428
422
0914
0965
1387
0323
0909
0915
2496
0322